թիւն է ։ Ի հասանել գրոյս հասուցէք զ10,000 և զանցեալ 5 ամսեայն՝ 'ի Յոպպէ՝ և առէք զձեռագիրն, և յայնմ հետէ կացջիք բարեաւ և խաղաղութեամբ ։ Իսկ եթէ դարձեալ ժխտէք բանից ձերոց զայլ և այլս գրելով և գործելով, ես անպարտ եմ, դուք տաջիք պատասխանի որում պէտք է (1824 · 'ի 15 Սեպտեմբերի) ։

Եւ 'ի սոյն աւուրս Պօլուցի Յակոբ վարդապետ կատարեալ զգործ նուիրակութեան՝ դարձ արար 'ի Կոստանդինուպօլսոյ, և հասեալ 'ի Կիպրոս եթող անդ զբեռինս, որք էին կապերտք և շալք և այլ ինչ յիշատակ Աթոռոյն, և գնացեալ 'ի Պէրութ յարեցաւ առ Լիւսդրացին Յակոբ, եւ ետ նշանս ամուսնութեան, եւ դարձ արար 'ի Կիպրոս յափշտակել զբեռինս, այլ գործակատար Աթոռոյն Սիմոն աղա ոչ ետ զայնս ըստ ազդարարութեան Խորհրդականաց Աթոռոյն ։

Եհաս Կուսակալն Դամասկոսի մեծաւ զօրութեամբ յԵրուսաղէմ, կալաւ զտեսուչն Յունաց Ս. Եղիայի վանաց և զոմանս 'ի ժողովրդոցն Լատինաց, եւ մատնեաց զնոսա 'ի գանս մինչեւ ցսպառումն շնչոց նոցին, և երկաթի կապանօք արգել 'ի բանտի, որպէս թէ զինչս ոմանց փախստէից Բեթղեհէմի Ֆէլլահից պահեալ իցեն առ իւրեանս, որոյ վասն 65,000 'ի Յունաց եւ 40,000 դահեկան 'ի Լատինաց տուգանս էառ, 'ի Հրէից 100,000, թող զայլազգիս Երուսաղէմի, յոմանց 5, եւ յոմանց 10,0000 դահեկան ։ Յետ ամենեցուն ձեռն արկ 'ի Հայս, և չգտեալ բնաւ տեղի ինչ յանցանաց եւ զրպարտութեան, զայս միայն առաջի եդ՝ թէ 'ի ժամանակի յայսպիսի սղութեան եկեալ իմ այսչափ բազմութեամբ զօրաց եւ ծանր ծախիւք, արարէք ինձ զաւելի պատիւ և ծառայութիւն ինչ ։

Հայք միջնորդ կալեալ զոմանս աղաչէին զնա ներել՝ յայտ առնելով զաղքատութիւնս իւրեանց, այլ նա բնաւ ոչ անսայր · ապա տարեալ ցուցին զհրովարտակն, և նորա ցասուցեալ ասէ՝ գիտեմ զհրաման Թագաւորին, և ընդդէմ այնմ չգործեմ ինչ · ահա զկանոնաւոր Ո—պ»—փէէն 'ի 40,000 դահեկանէ աւելի ոչ առնում · այլ միթէ ծանր ի՞նչ թուի ձեզ առնել ծառայութիւն ինչ, և սկսաւ ահացուցիչ բանիւք սպառնալ · միթէ ո՞չ կարէի գտանել յանցանս ինչ